ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի 9 ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 26207.5 մլն դրամ՝ պլանավորված 24273.4 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 8 տոկոսով կամ 1934.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 21.6 տոկոսով կամ 4653.8 մլն դրամով:

Սեպտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3671.9 մլն դրամ՝ պլանավորված 3281.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 11.9 տոկոսով կամ 390.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 15.8 տոկոսով կամ 501.1 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 102 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 1 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 29 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 76.6 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 26 ստուգում՝ 75.5 մլն դրամ գումարով:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 103 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 53-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 25-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 10-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 3-ը՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության և 12 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 վարչական գործ՝ 22.8 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 25 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 28.8 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 136 վարչական գործով սահմանվել է 1.6 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5506 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4771:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 42 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 8 վարձու աշխատողի՝ 1.0 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 55 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել է «Գործատուների կողմից մայրության նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման համապատասխանության նկատմամբ հսկողության իրականացման» ընթացակարգը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում նախարարության օպերատիվ հետախուզության, վերահսկողական և սպասարկման գործառույթ իրականացնող ստորաբաժանումների չորս աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Երկու կառույցների միջև իրականացվել են նաև անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2017 թվականի 3-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 639 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 349, ելքագրվել՝ 302 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն, որից 4-ը՝ կայքէջի միջոցով: